# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Մարի հրատարակչություն | Ամսագիրը նախատեսվում է նախադպրոցական ոլորտի մանկավարժական աշխատողների և ծնողների համար: Բովանդակային չափանիշներ. ելնելով երեխաների տարիքային առանձնահատկությունից ամսագիրը կներառի • լեզվական և հաղորդակցական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ճանաչողական և մոտիվացիոն կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • թվային և մեդիա կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • մշակութային կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • մաթեմատիկական և տեխնիկական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • տնտեսական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ֆիզիկական կուլտուրայի կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր: Ամսագիրը կնպաստի. ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 10-14-րդ կետերով սահմանված վերջնարդյունքների ապահովմանը: Կառուցվածքային չափանիշներ. • ամսագրի յուրաքանչյուր համարում էջերը բաժանված կլինեն 4 առանձին խորագրերի, • ընդգրկված նյութերի շարադրանքը և ներկայացման ձևը կհամապատասխանի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | այն տարիքային խմբի սովորողների ընկալումներին, ում համար նախատեսված է տվյալ ամսագիրը, • ամսագրերում զետեղված նյութերը, որպես կանոն, չեն կրկնի նախադպրոցական կրթական ծրագրում և ուսումնական նյութերում ընդգրկված նյութերի բովանդակությունը, այն կլրացնի նախատեսված բովանդակությունը՝ մեկնաբանված այլ մեթոդաբանությամբ, • ամսագրերը կունենան կրթական գործընթացին, երեխաների ստեղծագործական մտքին, նախասիրություններին ինչպես նաև սոցիալ-բարոյական ուղղվածությանը աջակցող բաղադրիչ, • ամսագրերը կնպաստեն երեխաների՝ միմյանց հետ հաղորդակցվելուն, • ծնողները ևս կարող են հանդես գալ, որպես հոդվածագիրներ: Տեխնիկական չափանիշներ. • մամուլը՝ 2 տ/մ, • չափսը՝ 60/80, 1/8, • կազմը՝ կավճապատ, գունավոր (չորս և ավելի), 115 գր., • թուղթը՝ ոչ կավճապատ, • տպագրությունը՝ գունավոր (չորս և ավելի), 70գր. • պարբերականը՝ ընդհանուր 2 համար, որից յուրաքանչյուրը՝ 2084 տպաքանակով, • նախատեսված ամսագրերի տպագրական որակը կհամապատասխանի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 71-Ն որոշման Հավելված N 2-ի 3-րդ կետով ամրագրված և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 2 Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու մասին կարգով գործողության մեջ դրված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 797 որոշմամբ ընդունված Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 007/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ-ի պահանջներին, • ամսագրերը կունենան անվանում, • ելքային տեղեկություններ՝ տպագրվող ամսագրերի հրատարակչական որակը կհամապատասխանի Հայաստանի Հանրապետությունում գործող ГОСТ 4.482-87 Издания книжные и журналные. Издательско-полиграфическое оформление и полиграфическое исполнение պետական ստանդարտներին, • հատուկ նշագրում՝ ամսագրերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ Վաճառքի ենթակա չէ բառերը, • ամսագրերը կլինեն նոր՝ չօգտագործված և հայերեն լեզվով, • ամսագրում ընդգրկված նյութերի 70 % կլինեն հեղինակային, • ամսագրում ընդգրկված նյութերում առկա տեղեկություններն ու փաստերը կլինեն հավաստի, ստուգելի և կունենան աղբյուրների հղումներ, • պատրաստի նյութը տպագրության հանձնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ փաթեթի նմուշ-օրինակը կտրամադրվի պատվիրատուին՝ առկա նյութերի բովանդակության հաստատման նպատակով: |

| | | |
|---|---|---|
| | | Ամսագրերի նյութերը կլինեն առանց ուղղագրական, ոճական, իմաստային և նմանատիպ սխալների։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИЗДАТЕЛЬСКИЙ ДОМ МАРИ, ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | товарный знак | технические характеристики |
| 1 | | |